ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

ԽՈԼԵՐԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Խոլերայի համաճարակումը կլանեց մեր երկրի բնակիչների ամբողջ ուշադրությունը այս վերջին երեք ամիսներում և այլ բանի հետաքրքրության համար բնաւ. տեղ չը թողեց։ Խոլերան, որ մեր երկրում սկսեց Բաքւից, տարածուեց այնուհետև մի կողմից Ռուսաստան՝ Հաշտարխանի միջով, իսկ միւս կողմից Կովկասի գրեթէ բոլոր նահանգները։ Ռուսաստանի սահմաններից դուրս՝ խոլերան դոյութիւն ունի այժմ միայն մեր հարևան Պարսկաստանում, մինչդեռ բարեբախտաբար մեր հարևան Տաճկաստանում, շնորհիւ ձեռք առած խիստ միջոցների՝ խոլերան չը կարողացաւ մուտք գործել կամ որ և է ծաւալ ստանալ։ Տարաբախտաբար արևմտեան Եւրոպան խսպառ զերծ չը մնաց խոլերայից, թէև առայժմ նա գլխաւորապէս Գերմանիայի ծովեզրեայ Համբուրգ քաղաքումն է սաստիկ. այդ կէս միլիոնանչափ բնակիչ ունեցող հարուստ քաղաքում խոլերան օրական հարիւրաւոր զոհեր է տանում։

«Մուրճ»-ի անցեալ 6-րդ համարում տպած մեր աշխատակից բժ. Ն. Ումիկեանի յօդուածում ասուած էր խոլերայի տեսողութեան մասին հետևեալը. «Խոլերայի համաճարակումի սկզբում հիւանդանում են մի քանի հոգի. այնուհետև դէպքերը բազմանում են.4—6 շաբաթից յետոյ համաճարակումը հասնում է իւր գագաթնակէտին», որից յետոյ, ի հարկէ, նա սկսում է նւազել։ Այդ խօսքերը մօտաւորապէս ճիշդ դուրս եկան։ Այն բոլոր տեղերում, ուր խոլերան ամենից առաջ սկսեց, համեմատապէս էլ սկսեց աւելի շուտով նւազել մինչ մի ամիս կամ ամիս ու կէս սաստիկ զարգանալուց ու զոհեր տանելուց յետոյ։

Շնորհիւ կանոնաւոր կերպով հաղորդուող պաշտօնական տեղեկութիւններին, որոնք տպւում են „Кавказъ“ և „Правительственный Вѣстникъ“ լրագիրներում, հնարաւորութիւն կայ այժմ համագումարներ հաղորդել խոլերային զոհ գնացածների մասին, որոնց ընդհանուր թիւերը հաղորդելը մենք խոստացել էինք անցեալ անգամ։ Բայց արդէն այդպիսի համագումարներ մենք գտնում ենք արւած նոյն պաշտօնական «Кавказ» ռուսաց լրագրում, որից և կ՚օգտուենք այս անգամւայ համար։

Հաշիւները վերաբերում են ժամանակամիջոցին՝ սկսած յունիսի 6-ից, երբ առաջին դէպքը եղաւ Բաքւում, մինչ օգոստոսի 1-ը, որի ընթացքում, Կովկասում, չը վարակւած մնացին միայն Սուխումի և Սևծովեան օկրուգները. մնացած բոլոր նահանգներում գործեց խոլերան, թէև ոչ բոլոր գիւղերում, անգամ ամբողջ գաւառներ կան, որոնք ազատ մնացին։ Վարակւած նահանգներում յիշեալ ժամանակամիջոցում շատ թոյլ էր խոլերան կամ բնաւ չը կար Տերեկի և Կուբանի նահանգների լեռնային տեղերում. Քութայիսի նահանգում խոլերան կար միայն Քութայիս, Բաթում և Պոտի քաղաքներում և այն գաւառներում միայն, ուր անցնում է երկաթուղու գիծը. Կարսի նահանգում խոլերան կար միայն Շորագեալի վիճակում. Թիֆլիսի նահանգի գաւառներից իսպառ զերծ մնացին Թելաւի և Թիոնէտի գաւառները։

Այն թիւերը, որ բերում ենք ստորև, ի հարկէ պէտք է ընդունել միայն որպէս մօտաւորապէս ճիշդ, որովհետև եղել են անկասկած դէպքեր, որոնք սխալմամբ ընդունւել են որպէս խոլերային, բայց եղել են նաև շատ դէպքեր, որոնք պաշտօնապէս արձանագրւած չեն եղել։

Համագումարները Կովկասի բոլոր նահանգների մասին ներկայացնում են հետևեալը.

Ա. ԱՆԴՐԿՈՎԿԱՍ.	Օրերի թիւը	Հիւանդացածներ։	Մահ.
Բաքու քաղաք (6-ից յունիսի) . .	56	2.501	1.934
Բաքւի նահանգ. (17-ից յուն.) . .	45	4.714	3.210
Թիֆլիս քաղ. (11-ից յուն.) . .	51	408	188

Թիֆլիս նահ. (8-ից յուլ.) . . .	24	1.710	877
Գանձակի նահ. (13-ից յուն). . .	49	5.486	2.885
Դաղեստանի շրջ. (18-ից յուն.) .	44	12.559	5.674
Երևանի նահ. (7-ից յուլիսի) . .	25	2.644	1.431
Քութայիսի նահ. (12-ից յուլ.). .	20	90	45
Զաքաթալի օկրուգ (16-ից յուլ.) .	16	212	133
Կարսի շրջան (17-ից յուլ.) . .	15	483	245
Բ. ՀԻՍՍԻՍԱՑԻՆ ԿՈՎԿԱՍ.			
Վլադիկաւկ. քաղ. (12-ից յուլ.) .	20	719	308
Տերեկի շրջան (26-ից յուն.). . .	36	16.450	8.039
Կուբանի շրջան (27-ից յուն.) .	35	7.161	3.611
Ստաւրապոլի նահ. (10-ից յուլ.) .	22	5.819	3.208
Համագումար . . .		60.956	31.788

Այդ հաշուից երևում է, որ առողջացածները կազմել են 52% բոլոր հիւանդացածների։

Զօրքերի մէջ եղած դէպքերը ի նկատի են առնուած միայն Թիֆլիսում, Բաքուում և Դաղեստանում։

Նոյն ժամանակաշրջանում, այսինքն 31-ն օգոստոսի վախճանուածների մ ի ջ ի ն օ ր ա կ ա ն թիւը եղել է՝

Բաքու քաղաքում	34	հոգի
Բաքուի նահանգում	71	»
Թիֆլիս քաղաքում.	3	»
Թիֆլիսի նահանգում	36	»
Գանձակի նահանգում	59	»
Դաղեստանում.	138	»
Երևանի նահանգում	57	»
Քութայիսի նահանգում.	2	»
Զաքաթալի շրջանում.	8	»
Կարսի շրջանում	16	»
Վլադիկաւկազ քաղաքում	15	»
Տերեկի շրջանում	223	»
Կուբանի շրջան.	109	»
Ստաւրապոլի նահանգում.	146	»

Ամեն մի նահանգի ազգաբնակութեան թուի հետ համեմատած, վախճանուածները կազմել են հետևեալ տոկոսները.

Հարիւր հոգի բնակիչներից հիւանդացել են կամ մեռել են՝

Տերեկի շրջանում	հիւանդացած	2,3%,	վախճանու.	1,1%
Դաղեստանի շրջ.	»	2,1 »	»	0,9 »
Ստաւրապ. նահան.	»	0,9 »	»	0,5 »
Բաքւի նահանգում	»	0,7 »	»	0,5 »
Գանձակի նահանգ.	»	0,7 »	»	0,4 »
Կուբանի շրջանում	»	0,6 »	»	0,3 »
Երևանի նահանգում	»	0,4 »	»	0,2 »
Կարսի շրջանում	»	0,4 »	»	0,2 »
Զաքաթալի շրջ.	»	0,3 »	»	0,2 »
Թիֆլիսի նահանգ.	»	0,2 »	»	0,1 »
Քութայիսի նահ.	»	0,01	»	0,01
Բաքու քաղաքում	»	2,7	»	2,09
Վլադիկաւկազ քաղ.	»	1,6	»	0,7
Թիֆլիս քաղաք.	»	0,3	»	0,3

Կովկասի ամբողջ ազգաբնակութեան թուի հետ համեմատած, մինչ օգոստ. 1-ը հիւանդացել են խոլերայից հարիւրին 0,8%, և վախճանուել հարիւրին 0,4%, որ նոյնն է թէ ամեն 250 բնակիչներից վախճանուել է խոլերայից մի (1) հոգի։

Այժմ, օգոստոսի վերջին օրերումն, խոլերայի համաճարակումը մեր երկրում շատ զգալի կերպով նուազել է, տեղ-տեղ գրեթէ իսպառ վերջացել է. բայց դեռ ևս նա կայ. յոյս կայ որ գալ ամսի վերջում այդ ահռելի հիւանդութիւնը միայն անցեալի յիշատակներ թողած կը լինի մեզանում։

Ուսումնարանների բացումը, որպէս բնական էր սպասել, ձեռնհաս կառավարութիւնների կողմից հրամայուած է յետաձգել թէ ռուսաց և թէ հայոց դպրոցների համար։ Ուսումնարանները մեզանում բացւում են սկսած սեպտեմբերի 15-ից միայն։

Լ. ՈՒՍԻՆԻ։